ՔՆՆԱԳԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՈՍՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. ՍԱՀԻՆՅԱՆ, Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1983, 261 էջ, 123 աղյուսակ*

Եվակի թիվ են կազմում հելլենիստական Հայաստանից մեզ հասած հուշարձանները և է՛լ ավելի քիչ են դրանց նվիրված մենագրական հետազոտությունները։ Այս պայմաններում մեծ նշանակություն է ստանում Ա. Սահինյանի «Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը» աշխատությունը։ Շուրջ երեք տասնամյակ նրա գիտական ուսումնասիրությունների կենտրոնն էին տաճարն ու նրան հարող շենքերը, և այդ ամենի պսակը հանդիսացավ հեթանոսական տաճարի վերակազմության նախագիծը։ Տաճարի վերակազմությունը սկսվեց 1969-ին և ավարտվեց 1975 թվականին, որի համար Ա. Սահինյանն արժանացավ ՀՍՍՀ պետական մրցանակի։ Այդ մեծ գործի գիտական հիմնավորումը վերոհիշյալ մենագրությունն է։ Հետազոտության ամեն մի էջ ներթափանցված է հուշարձանների վերլուծությամբ, դրանց առանձին հանգույցների կոնկրետ, փաստական տվյալներով, չափագրական հիմնավորումներով և նույնիսկ հետագայում ծածկված աշխատանքների հաստատված ակտերով, այնպես որ մենագրության առանձին հատվածներ թողնում են հնագիտական աշխատանքների հաշվետվությունների տպավորություն։ Երեսուն հեղինակային մամուլ ծավալով այս գործը երևույթ է հայկական ճարտարապետության ուսումնասիրության ասպարեզում։ Այստեղ քննարկվում են ամրոցի անտիկ շրջանի բոլոր կառույցները, տրվում են դրանց վերակազմությունների նախագծերը, հետազոտվում շինարարական տեխնիկան, բացահայտվում տարբեր տիպի շենքերի հորինվածքային առանձնահատկությունները։

Աշխատության առաջին գլուխը նվիրված է Գառնիի մասին եղած գրականության տեսությանը։ Երկրորդ գլխում դիտարկվում են ամրոցի հզոր պարիսպները և ամրոցի տարածքում հայտնաբերված աշխարհիկ կառույցները։ Առանձնակի ուշադրավ է ամրոցի պաշտպանական սիստեմի բացահայտումը։ Պարսպապատերի և հատկապես աշտարակների կառուցողական առանձնահատկությունները պարզելու համար անհրաժեշտ էր ներթափանցել անտիկ ռազմարվեստի, պաշտպանողական տեխնիկայի, ժամանակի ամրոցակործան մեքենաների օգտագործման եղանակների մեջ, հասկանալու համար ինչպես պարսպապատերի ընդհանուր կոնֆիգուրացիան, այնպես էլ աշտարակների թե՛ միմյանցից անհավասար դասավորության, թե՛ դրանց միմյանցից այնքան տարբեր շինարարական տեխնիկայով կառուցված լինելու պատճառները։ Այս գլխում հանգամանորեն քննվում են նաև պալատական կառույցի և բաղնիքի շենքի պահպանված մնացորդները և ներկայացվում դրանց մասնակի (պալատ) կամ ամբողջական (բաղնիք) վերակազմությունները։ Հեղինակը հանգամանորեն քննում է բաղնիքի հորինվածքը, քայլ առ քայլ բացահայտում նրա շեռուցման և ջրամատակարարման սիստեմը, ցույց տալիս կապերը մի կողմից հելլենիստական աշխարհի նույնատիպ կառույցների հետ, մյուս կողմից նշում հայկական միջնադարում նույն այս հորինվածքի դրսևորման փաստերը Դվինում, Անիում և այլուր։ Գառնիի պեղումների առավել մեծ հայտնագործություններից էր բաղնիքի հանդերձարանի հատակի խճանկարը, որի վերլուծությունը նույնպես իր արժանվույն տեղն է գտել մենագրության մեջ և ըստ էության ելակետ դարձել կառույցը III դարի վերջով թվագրելու համար։

Հեթանոսական տաճարի և բաղնիքի միջև ձգվում է պալատի շենքը, որից դժբախտաբար մեզ են հասել հիմնապատերը միայն։ Համեմատաբար ավելի լավ է պահպանվել պալատի հարավային մասի նկուղային հարկը՝ իր ուժեղ որմնամույթերով հանդերձ։ Սահինյանը հանգամանորեն հետազոտում է պալատական կառույցը, կազմում ծածկերի երկու հնարավոր տարբերակների վերակազմության նախագծերը։ Նա գրում է. «Թաղի կառուցման եղանակի համար հնարավոր է երկու տարբերակ։ Մեկը՝ եթե որմնամույթերից դեպի կենտրոնական կամարաշարքի համապատասխան մույթերը նետվեն թաղակիր կամարներ և նրանց միջև ստացված ազատ տարածությունները ծածկվեն թաղի համապատասխան սեկցիայի քարերով։ Երկրորդը՝ եթե որմնամույթից որմնամույթ կամարներ նետվեն դահլիճի երկայնական ուղղությամբ և այդ յու-

բահատուկ կամարաշարքի վրայից սկզբնավորվի դեպի կենտրոնական կամարաշարք ընթացող թաղը» (էջ 50)։ Մեզ թվում է, որ այստեղ առավելությունը պետք է տալ երկրորդ տարբերակին։ Այն ավելի դյուրին է իրականացնել, և որ գլխավորն է, հայկական վաղ միջնադարյան ճարտարապետության մեջ հետագայում ընդհանրանում է հենց լուծումը (Զվարթնոց-գահարահի ծածկը, Օձուն-սյունասրահի ծածկը և այլն)։ Հայ ճարտարապետները, միանգամայն իրավացի, խուսափել են այնքան հաճախ դասավորված թաղակիր կամարներից։

Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում պալատական կառույցի թվագրության հարցը։ Տարակույս չի կարող լինել, որ Տրդատ արքան, կառուցելով տաճարը, նույն ամրոցի տարածքում պետք է ունենար իր պալատական շենքը։ Սակայն դժվար է ասել, արդյոք այն մնացորդները, որ հասել են մեզ, պատկանո՞ւմ են այդ նախնական պալատին թե ոչ։ Հեղինակը ավելի կողմնակից է պալատական այս շենքերը դիտել առնվազն ժամանակակից տաճարին, եթե ոչ ավելի վաղ։ Թվում է, որ դրա համար չկան հավատի կռվաններ։ Պալատի կառուցողական տեխնիկան արմատապես տարբեր է տաճարի կառուցման եղանակից, և սրբատաշ որձաքարի մեծածավալ քարերի օգտագործման փոխարեն պալատի պատերը շարված են «ճեղքված որձաքարից և գետաքարից, իբրև միացնող նյութ օգտագործված է կրաշաղախը» և հետո՝ «Պալատական խմբի՝ դեպի բաղնիքի շենքը ուղղված կեսում, քարի հրմնաշարքերին զուգընթաց, տեղ-տեղ հանդիպում է թրծված աղյուսի շարվածքը» (էջ 78)։ Բացառված չէ, որ աշխարհիկ այս շենքը կարող էր դարերի ընթացքում կործանվել և նորից վերաշինվել, ճիշտ այնպես, ինչպես VII դարի կեսերին այն լրիվ կործանվել էր, և հեթանոսական տաճարին հպված ներսեսյան շեն բոլորաձև եկեղեցու մի հատվածը կառուցվել հենց այս պալատական շենքի վրա։ Մյուս կողմից, պալատական շենքերը իրենց կառուցողական տեխնիկայով լիովին համահնչյուն են III դարի վերջով կամ IV դարի սկզբով թվագրվող բաղնիքի հետ և վերջինիս հետ կազմում են մի ամբողջական տարածական լուծում, որոշակի ձևավորված հրապարակ, հանգամանք, որը ևս կռվան է այս բոլոր կառույցների՝ միաժամանակ կառուցված լինելը ենթադրելու համար։ Համենայն դեպս այստեղ խիստ դժվար է երկու դարի ժամանակագրական խզում նշմարել։

Աշխատության հիմնական առանցքն է կազմում տաճարի մանրակրկիտ հետազոտությունը, սակայն մինչ այդ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է նախորդ հետազոտողների վերակազմության նախագծերը (Ֆ. Դյուրուա, Կ. Ռոմանով, Ն. Բունիաթյան), ընդ որում հատկապես նշվում է Ն. Բունիաթյանի նախագծի արժանիքները, որը «կատարված է բացառիկ սիրով, մասնագիտական բարձր մակարդակով և կատարման վիրտուոզ վարպետությամբ։ Այն ամբողջությամբ ներկայացված է հեղինակի՝ Գառնիի տաճարին նվիրված մենագրության մեջ» (էջ 67)։ Միանգամայն տրամաբանական է Ա. Սահինյանի ակնածանքը դեպի Ն. Բունիաթյանի նախագիծը. եթե Դյուրուայի նախագիծը մի էսքիզ էր միայն՝ հեռու իրականությունից, իսկ Ն. Մառի արշավախմբի ճարտարապետ Կ. Ռոմանովի նախագիծը, թեև կատարված էր մեծ բարեխղճությամբ, բայց չէր շոշափում բոլոր հարցերը, ապա Ն. Բունիաթյանի նախագծում առաջին անգամ տրված էր նշանավոր հուշարձանի իրական կերպարը։

Միանգամայն իրավացի էր Ա. Սահինյանը, երբ տաճարի հետազոտությունը սկսեց անխուսափելի բոլոր քարերի մանրամասն շափագրումից, մի բան, որը ճարտարապետական նման մի հուշարձանի վերլուծության ամենագլխավոր նախապայմանն էր։ Այս ընթացքում հայտնաբերվեցին նոր մանրամասներ, տարբերություններ նախկինում կատարված շափագրությունների հետ, հանգամանք, որը միանգամայն տրամաբանական էր. ոչ Կ. Ռոմանովը և ոչ էլ Ն. Բունիաթյանը հնարավորություն չէին ունեցել շափագրել բոլոր մանրամասները, և ավելին, համադրել, գետնի վրա վերակազմել տաճարի առանձին հանգույցները։ Ահա այս էլ հնարավորություն տվեց Ա. Սահինյանին բացահայտել մի շարք խիստ ուշագրավ օրինաչափություններ, գտնել քարերի իրական տեղերը և դրանց փոխադարձ դասավորության գաղտնիքները։ Այսպես, շայլ առ քայլ վերակառուցվեցին թե՛ սյունասրահների ծածկերը, թե՛ արխիտրավների շարքերը, թե՛ զարդաքոտին և թե՛ քիվը։ Համարձակ կարելի է ասել, որ նախքան ծավալային վերականգնումը, տաճարն արդեն «վերականգնված» էր գետնի վրա՝ ամեն մի հանգույց հետազոտված մանրամասն, մանրակրկիտ վերլուծված։ Այս ամենն էլ իր արտահայտությունն է գտել մենագրության մեջ, որտեղ տաճարի հետազոտությանն ու վերականգնմանը նվիրված են երկու հիմնական գլուխները։

Աշխատության հինգերորդ գլխում քննարկված են տաճարի թվագրության հետ կապված հարցերը, և հելլենիստական աշխարհի բազմաթիվ նույնատիպ հուշարձանների հետ կատարած համեմատությունների հիման վրա հեղինակը հանգում է այն ճիշտ եզրակացության, որ տա-

նարը կառուցվել է մ. թ. I դարի երկրորդ կեսում։ Հաջորդ, վեցերորդ գլուխը նվիրված է տաճարի ճարտարապետական-գեղարվեստական վերլուծությանը, իսկ յոթերորդը՝ տաճարի կառուցողական տեխնիկային և կոնստրուկցիաներին։ Ահա այս երկու գլուխներն են, որ կազմում են աշխատության հիմքը, և այստեղ է, որ տաճարի առանձին հանգույցների մանրամասն հետազոտությունը, կառույցի հիմքում ընկած մոդուլային համակարգի մանրակրկիտ ուսումնասիրությունը և նույն մոդուլային համաչափության բացահայտումը (տաճարի ինչպես առանձին մասերում, այնպես էլ ամբողջ ծավալատարածական լուծման մեջ) հնարավորություն են տալիս հեղինակին ամբողջացնել հետազոտությունը և դրանց հիման վրա էլ վերականգնել տաճարը։

Աշխատության այս վերջին գլուխներում ևս տեսական դրույթները սերտորեն միահյուսված են վերականգնման պրակտիկ աշխատանքների ընթացքի հետ՝ պայմանավորելով և հաստատելով մեկը մյուսին։ Աշխատանքային մեթոդը՝ ընտրված հեղինակի կողմից, միակ ճիշտ ուղին էր այս դեպքում, և միայն այն կարող էր բացահայտել ինչպես տաճարի կառուցողական ձևերի հիմքում ընկած օրինաչափությունները, այնպես էլ հնարավորություն տալ որոշելու տաճարի տեղը Առաջավոր Ասիայի հելլենիստական մշակույթի շրջանակներում։ Ա. Սահինյանն առանձնակի կանգ է առնում Գառնիի տաճարի ծավալատարածական հորինվածքի վրա և միանգամայն իրավացի է, երբ գրում է. «...Գառնիի տաճարը հունահռոմեական, ընդհանուր հելլենիստական և տեղում գոյություն ունեցած ճարտարապետական-կառուցողական արվեստի յուրահատուկ մի սինթեզ է, և այն իրենից ներկայացնում է հայկական-հելլենիստական մշակույթի հուշարձան» (էջ 30)։ Սակայն դրա հետ միասին դժվար է համաձայնվել այն դրույթի հետ, որտեղ նա անմիջական, հորինվածքային կապ է տեսնում Գառնիի և դրանից շուրջ 1000 տարի առաջ կառուցված ուրարտական Մուսասիրի և Էրեբունիի Սուսի տաճարների միջև, հորինվածքներ, որոնք խիստ հեռու են հելլենիստական ճարտարապետության շրջանակներում մշակված ձևերից։ Անշուշտ, տարակույս չի կարող լինել ուրարտացիների տիրապետության շրջանի ճարտարապետության, կառուցողական տեխնիկայի և հայկական ճարտարապետության աղերսների հարցում։ Սակայն այլ բան է վերջինիս այս կամ այն հորինվածքը անմիջականորեն հետևեցնել ուրարտական կոնկրետ որևէ կառույցից, մանավանդ, եթե գա վերաբերում է մինչև վերջ մշակված հելլենիստական ճարտարապետությանը այնքան բնորոշ հորինվածքին, ինչպիսին է Գառնիի տաճարը։ Այստեղ անհրաժեշտ է նշել, որ նույն Մուսասիրի տաճարը սյունասրահով շրջապատված «պերիպտերը» համարելը խիստ թեական է և բնավ չապացուցված։ Տաճարի՝ մեզ հասած պատկերաքանդակի գծանկարում որպես առանձին կանգնած սյուներ թվացող ուղղաձիգ գծերը փաստորեն ոչ թե առանձին կանգնած քարի սյուներ են (նման բան ուրարտական հուշարձաններում չի հանդիպում առհասարակ), այլ նույն ուրարտական ճարտարապետության այնքան բնորոշ ուղղանկյուն որմնասյուներ, այնպես որ «պերիպտերային» հորինվածք այստեղ չի եղել բնավ։ Գառնիի տաճարը հայկական հելլենիստական մշակույթի արդասիք է, հայկական ճարտարապետության մեջ նույն հելլենիստական դարաշրջանում գոյատևող երկու հիմնական՝ հելլենիստական և տեղական-ավանդական ուղղություններից առաջինի մեջ հասած առավել ցայտուն մարմնավորումը։ Դժբախտաբար, մեզ հայտնի չեն նույն այս դարաշրջանի տեղական-ավանդական ուղղությանը պատկանող մոնումենտալ կառույցները։ Արվեստի բնագավառում այս ուղղությունն իր որոշակի դրսևորումն է գտնում քանդակագործական մի շարք հուշարձաններում (իշխանական վերնախավին պատկանող մարդկանց դիմաքանդակներ և այլ քանդակներ՝ հայտնաբերված Դվինի պեղումներից)։ Սակայն այս նույն ուղղության համահունչ ճարտարապետական լուծումներ, տաճարներ, փաստորեն հայտնի չեն. միակ հուշարձանը, որը կարելի է այս ուղղությանը վերագրել, դա Անիի տարածքում Ն. Մառի պեղած չորս ցածրանիստ, ուժեղ մույթերի վրա բարձրացող կառույցն է, որն իր ձևերով մի կողմից կապվում է իրանական կրակապաշտական կառույցների ձևերի հետ և մյուս կողմից յուրովի անդրադարձ է հելլենիստական դամբարանային ճարտարապետության։ Հելլենիստական դարաշրջանում գոյատևող, հին արևելյան արմատներ ունեցող գեղարվեստական մշակույթի այս ուղղությունն էր, որ հեթանոսության կործանումից հետո, երբ անտիկ արվեստի՝ ու ճարտարապետության դրսևորումները (միակ բացառությունն էր Գառնին) անխնա կործանվեցին և ոչնչացվեցին, ելակետ դարձավ վաղ քրիստոնեական հայկական արվեստի և ճարտարապետության զարգացման համար։

Անշուշտ, խիստ հրապուրիչ է վաղ քրիստոնեական մշակույթի հնագույն շերտերում հայտնաբերել հեթանոսական կառույցներ, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն կործանվել, որբագործ-

վել են և վերածվել քրիստոնեական տաճարների։ Նման ենթադրություններ արվել են վաղուց, և Սահինյանը ևս համարում է Տեկորն ու Քասաղը, Երերույքն ու Զովունին նման վերակառուցում ապրած շենքեր։ Սակայն դրա հետ դժվար է համաձայնվել, քանի որ այնքան ուժեղ են ու ցայտուն նույն այդ շենքերում վաղ քրիստոնեական ճարտարապետությանը բնորոշ գծերը, այնքան սերտ են դրանց կապերը IV—V դարերում մշակված ձևերի հետ։ Բայց միանգամայն իրավացի է Սահինյանը, երբ ժառանգորդական կապեր է տեսնում կառուցողական, կոնստրուկտիվ հարցերի շրջանակներում, այնպիսի տարրերում, ինչպիսիք են եռաշերտ պատը, կամարն ու թաղը, աբսիդը և գմբեթարդը, հեղքված որձաքարով և գետաքարով պատի շարվածքը, որտեղ իբրև կապակցող նյութ օգտագործվել է կրաշաղախը (էջ 212)։ Չի կարելի լիովին բացառել հորինվածքային ձևերի ժառանգորդության հարցը, և այս հանգամանքն առանձնակի ցայտուն է դրսևորվում մեմորիալ ճարտարապետության մեջ։ Սակայն դժբախտաբար մեզ անհայտ են մնում հելլենիստական դարաշրջանի տեղական-ավանդական ուղղության մոնումենտալ կառույցները, հանգամանք, որը թերևս իր լուսաբանումը գտնի հետագա պեղումների շնորհիվ։

Ա. Սահինյանի «Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը» մենագրությունը շատ ավելի լայն ընդգրկում ունի, քան կարելի է եզրակացնել նրա վերնագրից։ Այստեղ հանգամանորեն հետազոտված և վերլուծված է մի ամբողջ դարաշրջանի ճարտարապետական մշակույթ և նոր խոսք է ասված դեռևս չհետազոտված մի անչափ կարևոր բնագավառում։ Այն խիստ կարևոր ներդրում է նաև հայկական միջնադարյան ճարտարապետության ակունքների ուսումնասիրության ասպարեզում և հայ ժողովրդի ճարտարապետական մշակույթի ուսումնասիրության մեջ ընդհանրապես։

ՍՏԵՓԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ճարտարապետության դոկտոր